

ԶՈՐՄԱՆԱԼԻ ԳԱՆԳԱՏԻ ՄՔ ԼՈՒԺՄՈՒՆՔ.

Զարմանալի գանգատ ըսածնիս այն գանգատն է որ զանազան կողմերէ երկու երեք տարիէ իվեր ուղղակի եւ անուղղակի Խալիպեան Ռւսումնարանիս Գրասենեակը կհամնի. այսինքն թէ ինչո՞ւ համար Գերապատի Առաջնորդը յնայիր որ Տպարանին, Ամսագրոյն եւ Գրասենեկին ամէն գործերն ալ կանոնաւոր եւ անսխալ եւ գեղեցիկ ու փառաւոր կերպով կատարուին ամէն կրողմանէ : Մը չափ ալ իրաւացի լինի այս գանգատը շատ բանի մէջ, — թէ պէտ եւ այն եւս ոչ աւանց պատճառի, — զարմանալի է կըսեւք՝ անոր համար որ գանգատողները մտքերնին գրածի պէս մը կերեւան թէ Գեր. Առաջնորդը՝ թէ Ռւսումնարանին եւ թէ անոր տպարանին ու գրասենեկին ոչ միայն Հիմնագիրն ու ընդհանուր Վերատեսուչն է, հապանաեւ անոնց մէջի ամէն մանր գործողութիւնքն ալ միշտ եւ անպատճառ նորա աչքէն ու նորա ձեռքէն կանցնին : Կարծես թէ, օրինակի համար, մտքերնին գրած են որ Մասեաց Աղաւնուոյն ոչ միայն գլխաւոր խմբագրիչն ու քննիչն է Գեր. Առաջնորդը, այլ եւ ինքն է անոր շարողը, տպողը, ծալլողը, կարողը, համրողը, ժողվողը, ծրար կապողը, վրան հասցէներ գրողը կամ կացընողը, թրղթատարին յանձնողը, բաժանորդներէն ըստակն ընդունողը, հաշիւ ըռնողը, եւ այն, եւ այն . ուստի եւ կզարմանան թէ ինչպէս կլինի որ երեւմն թերթերը ծուռ ծալլուած են, երեւմն կարուածքը գէշ, երեւմն հասցէն սխալ . . . խելքերնին Համնիր թէ Առաջնորդը ինչպէս կրնայ այնպիսի անմտագրութիւններ ընել : — Օրացոյց կտպուի. մէջը սխալ մը կտեսնեն, թէ եւ փոքրիկ սխալ. Առաջնորդին ըրած սխալն է կըսեն . — այն դնեմք թէ բան չէ . — բայց 1860-ի օրացուցին կազմը տեսնելով՝ ոմանք սաստիկ գանգատեր էին Առաջնորդին վրայ որ այնպէս լոկ սոսընձով կազմուցեր է օրացոյցներուն կողքն ու իրենց յուղարկեր է՝ առանց կարելու : Խսկ այս տարուան օրացոյցը տեսնելով որ բաւական լաւ ու կոկիկ կազմուած է, ամէն մարդ հաւաներ է, անշուշտ մտքերնին դնելով որ կազմողը յառաջագիմութիւն ըրեր է կազմարարութեան արհեստան մէջ . . .

Ասոնք տեսնելով հարկ կհամարիմք ծանուցանել ամենուն թէ Գեր. Առաջնորդը այս ամենայն մանր գործողութեանց անմիջապէս եւ անձամբ մտագրութիւն ընելու ոչ պարագ ունի, ոչ ժամանակ, եւ ոչ գիտաւորութիւն .

անոր համար ինքը կարգ եւ կանոն դրեր է որ ուսումնարանին, տպարանին, գրասենեկին եւ ամսագրոյն գործերը յանձնուին իրեն ընտրած եւ որոշած պաշտօնատէ ըներուն, որք պիտի գիտնան եւ գիտեն իրենց պարագն ու իշխանութեան չափը, եւ միայն իրենց իշխանութենէն վեր եղած բաներուն մէջ Գեր. Առաջնորդին հրամանը կհարցընեն եւ կընդունին, եւ ըստ այնմ կդործեն (*):

Այսպէս աչա Խալիպեան Ռւսումնարանն ունի իրեն Տեսուչը (Ակումբուր), որ է Պ. Սարգիս Աւետիքեան Ցիգրանեան, եւ անոր յանձնուած է ուսումնարանին անմիջական կառավարութիւնը՝ թէ ուսումնական, թէ բարոյական եւ թէ անտեսական մասանց կողմանէ : Տպարանը ունի իրեն Տպագրապետը (սպառավոր), որ է Պ. Շմիթ, եւ անոր յանձնուած է տպարանին անմիջական կառավարութիւնը : Գրասենեակն ունի իրեն Տեսուչը, որ է ներքոյգրեալ Գրիգոր Տէօլիք թեան, եւ անոր յանձնուած է գրքերուն կազմին, ծախելուն, այլ եւ այլ տեղեր յուղարկելուն եւ հաշիւները բռնելուն հոգը : Նմանապէս եւ ամսագրոյն խմբագրատունը ունի իրեն Տեսուչ՝ Պ. Քառաւուլովը, որոյ պաշտօնն է Մասեաց Աղաւնուոյն եւ Ծիածանին բաժանորդաց անունները ցուցակը անցընել, փողերը հաւաքել, հաշիւները բռնել, տեսրակները պատրաստել տալ, թղթատարին յանձնել, եւ այն : Իրաւ է որ այս բաներէս մէկուն վերաբերեալ ինչ խնդիր որ ուղղակի առ Առաջնորդն գայ, նա իսկոյն կյանձնէ այն խընդույն համար որոշուած անձին . բայց այն խնդիրները գրողները լաւ կըսեն, եթէ փոխանակ Գեր. Առաջնորդին այս նեղութիւնը տալու՝ ուղղակի գրեն «Առ Տեսուչ Խալիպեան Ռւսումնարանին, կամ Առ Տեսուչ Տպարանի կամ Գրասենեկի կամ Խմբագրատան Խալիպեան Ռւսումնարանին» եւ այն, եւ գիտնան որ իրենց խնդիրը նոյնպէս փութով եւ սիրով կկատարուի, եւ եթէ օրինաւոր գանգատ մը ունին՝ կդարմանուի կամ կլուծուի :

Տեսուչ Գրասենեկի Խալիպ. Ռւսումնար, Գրիգոր Տէօլիք թեան.

(*) Որոշուած է որ ամիսը մէյմը ամենայն պաշտօնաւեարք կհաւաքուին Գեր. Առաջնորդին բռվը, եւ զանազան հարկաւոր խնդրոց վրա խորհուրդ կըսեն՝ իրարեկազութիւն եւ իշխանացարդիմութիւն զործոց ուսումնարանին եւ անոր վերաբերեալ տեղերուն :